ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, «Աւետումն Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

Տոնի առթիվ Հոգևոր Ճեմարանը փակ էր այդ օրը։

***

ԱՊՐԻԼԻ 9-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ԿՐԿՆԱԶԱՏԻԿ։ «Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմաց»։

Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը՝ օրվա ազգային մեծ խորհրդի մասին։

Սուրբ պատարագից հետո կատարվեց հոգեհանգստյան պաշտոն Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։

***

ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, հին տոմարով Զատիկը Բաքվում տոնելուց հետո, Մայր Աթոռ վերադարձան Հոգևոր Ճեմարանի ուսանողներ բարեշնորհ Անաստաս սարկավագ Մովսիսյանը և բարեշնորհ Արշավիր սարկավագ Շաքարյանը։

***

ԱՊՐԻԼԻ 13-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Ճեմարանի սրահում, Երևանի Պետական մատենադարանի ավագ գիտական աշխատող Սուրեն Քոլանջյանը դասախոսություն կարդաց «Հայ գաղթականությունները ընդհանրապես և Ռումինիայի, Բուլղարիայի և Լեհաստանի գաղութները մասնավորապես» թեմայի շուրջ։ Դասախոսությունը լսվեց հետաքրքրությամբ։

Դասախոսությունից հետո հարգելի բանախոսը սիրալիր կերպով պատասխանեց ունկնդիրների հարցերին։

***

ԱՊՐԻԼԻ 16-ԻՆ, ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և հավուր պատշաճի քարոզեց հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԱՊՐԻԼԻ 20-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, արտասահմանյան բազմաթիվ երկրներից մամուլի շուրջ 30 թղթակիցներ այցելեցին Մայր Տաճար և ապա ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից։ Նորին Ս. Օծությունը բարեհաճեց պատասխանել օտար թղթակիցների հարցերին։

***

ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ, ՇԱԲԱԹ, Հոգևոր Ճեմարանի ընթերցասրահում տեղի ունեցավ գրական-գեղարվեստական երեկո, ուսանողների ուժերով։ Ա լսարանի ուսանող Վահանյան Վիգենը կարդաց իր գրած գեղեցիկ շարադրությունը «Կենդանի հիշատակ» վերնագրով։ Կատարվեցին երգեր և արտասանություններ։ Ելույթ ունեցավ Ճեմարանի մանդոլինիստների խմբակը։

Վեհափառ Հայրապետի իմաստալից խրատականով ավարտվեց գրական-գեղարվեստական երեկոն։

***

ԱՊՐԻԼԻ 23-ԻՆ, ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը։

Սուրբ պատարագին ներկա էին ուխտավորներ Մոնտեվիդեոյից։

Սուրբ պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն ամերիկահայ ուխտավորների ննջեցյալների հիշատակին։

***

ԱՊՐԻԼԻ 27-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռում գումարվեց ճարտարապետների հանձ-

նաժողովի հերթական նիստը։ Քննարկվեցին մի շարք նախագծեր նոր Վեհարանի ներքին ձևավորման վերաբերյալ։

***

ԱՊՐԻԼԻ 28-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեց Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերապատիվ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը։

***

ԱՊՐԻԼԻ 28-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեց Շիրակի թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Թաջիրյանը։

***

ՄԱՅԻՍԻ 4-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 3.30-ին, Հոգևոր Ճեմարանում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, նշվեց երջանկահիշատակ Տ. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի ծննդյան 120-ամյակը։

Գործադրվեց գեղարվեստական պատշաճ հայտագիր՝ բաղկացած շարականներից, արտասանություններից, երգերից և խմբերգերից։

Լուսահոգի պատրիարքի կյանքի, գործունեության, ժամանակաշրջանի, հոգեբանության և մատենագրական վաստակի մասին բովանդակալից զեկուցումով հանդես եկավ «Էջմիածին» ամսագրի խմբագիր և Հոգևոր Ճեմարանի դասախոս Ա. Հատիտյանը։

Հանդիսության վերջավորության Վեհափառ Հայրապետը, ոգեկոչելով հիշատակը մեծանուն եկեղեցականի, ուսանողության խոսեց գեղեցիկ մի խրատական՝ ծանրանալով Օրմանյան սրբազանի նկարագրի կայունության, դեպի հոգևոր ասպարեզը ունեցած հավատարմության և սիրո մասին։ Իր խրատականի վերջում Վեհափառ Հայրապետը հորդորեց ուսանողությանը՝ որպես հայ հոգևորականի մտատիպար ունենալ Օրմանյան սրբազանի կյանքն ու գործունեությունը։

Օրմանյան սրբազանի ծննդյան 120-ամյակին նվիրված այս հիշատակելի հանդիսությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով։

***

ՄԱՅԻՍԻ 7-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր պատարագ մատուցեց Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը։